164
L. II. 2

Ի ՄԱՑԵՆԱԴԱՐԱՆԷ
Մէլքոնի Գասպարեան
ՓԱՆԵԱՆՑ·

БИБЛІОТЕКИ
Мелькона Каспаровича
ПАНІЕВА.

№ 1284

№ 1 ՅՈՒՆՎԱՐԻ 14 (26) 1878 ՅՈՒՆՎԱՐԻ 14 (26) № 1

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվան 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Թատուրեանի խանութում

Օտարաքաղաքացիք գիմում են ուղակի Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Մշակի» եօթերորդ տարի։—Ներքին տեսութիւն։ Պատերազմական բեմից։ Նամակ Շուշուց։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Իտալիայի թագաւոր Վիկտոր-Էմմանուէլ։ Արտաքին լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Ֆելիետօն

«ՄՇԱԿԻ» ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻՆ

—

«Մշակը» իր վեց տարվայ գործունէութեան ընթացքում շատերին իր դէմ թշնամացրեց, շատերի դժգոհութիւնը շարժեց։ Շատերը «Մշակի» վերջին տարիների գործունէութիւնը անաջող համարեցին։

«Մշակը» անկասկած չէր կարող մնալ վերջին տարիները ինչ որ էր սկզբում։ Առաջ կային հարցեր, որոնց նախկին լրագրութիւնը ձեռք տուած չէր,—«Մշակը» նրան յարուցեց, նրա յարձակողական յօդուածները իրանց վրա ուղղրութիւն դարձրին և անկասկած սովորեցրին ընթերցողներին ոչ թէ միայն իրանց անձնական խնդիրներով զբաղվել, այլ և ընդհանուր հասարակական և մասնակային հարցերով։ Լրագրի առաջին տարիների յարձակողական, անխնայ, դատապարտիչ ուղղութիւնը գոյութեան իրաւունք ունէր և բոլորովին օրինական առաջաբան էր աւելի ուշ և հանդիստ գործունէութեան համար։ Յարձակողական ուղղութիւնը միայն կարող էր մի դեռին պատրաստել հետևեալ հասարակաշէն (եթէ կարելի է այդպէս ասել) գործունէութեան համար։ Եթէ այդ յարձակողական պերիոդը անցել է,—դա բոլորովին բնական է և նրան բռնի, արուեստական կերպով պահպանել կը նշանակէր անբնական և անառողջ ուղղութիւն մտցնել ժողովրդի մտածմունքների մէջ։ Ընկասկած պէտք էր պակասութիւնները ցոյց տալ, պէտք էր անտարբերութիւնը նախատել և պէտք է ժամանակ առ ժամանակ կրկնել այդ և այժմ հարկաւոր դիպուածներում,—բայց միայն այդ ուղղութեամբ շարունակել գործունէութիւնը անարդար և անյարմար կը լինէր։ «Մշակը» հարկաւորութիւն չունի այժմ իր գոյութեան համար մարտնչելու՝ նա կայ, նա կազմել է իր համար մի դեռին, նա կարող է առաջ ընթանալ հանդարտ և հաստատ քայլերով։

Նա ինքն արդէն իրաւունք ունի համարել իրան մի հասարակական ոյժ։

Մարդիկ կան դուցէ որոնք յարձակվում են «Մշակի» այն ընթացքի դէմ, որին պէտք է իսկապէս համարէին այդ լրագրի բոլորովին բնական, նորմալ զարգացման հետևանք։

Այն, որի համար մեր լրագրի թշնամիները առաջին տարիներում նրան դատապարտում էին, որ իբր թէ «Մշակը» միայն քանդում է և ոչինչ չէ ստեղծում՝ իրաւացի չէր։ Նրանք իրանց կուրութեան մէջ չէին նկատում, որ քանդելու ձևի մէջ արդէն կային նշոյլներ կրկին շինելու, կար ճգտումն վերատին կառուցանելու։ Իսկ վերջին տարիներում հասել է այս աւելի հանդարտ գործունէութեան շրջանը երբ հինը քանդելուց յետոյ նոր բան են շինում։

Թող ընթերցողները ներեն մեզ մի օրինակով պարզելու մեր միտքը։ Երևարայեցեք ձեզ մի հին քաղաք կամ քաղաքի մի հին թաղ ուզում են նորոգել.... Յանկարծ քանդում և հեռացնում են բոլոր տները, որոնք մի նոր փողոցի ճանապարհի վերա են։ Տների քանդողները անկարող են նոր տներ շինել, նախ քան գծագրված լինի փողոցի ուղղութիւնը։ Այս առաջին աշխատանքից յետոյ, որ շատերին վրդովեցնում է, իսկ շատերին էլ դուցէ ուրախացնում,—հասնում է ժամանակը, երբ սկսում են նոր շինութիւնները կանգնեցնել։ Առաջին նոր կանգնեցրած տունը ուրախութեան պատճառ է դառնում նոցա համար, որոնք հասկացել են ամբողջ պրոեկտը (գծագիրը), իսկ ուրիշ կողմից առանց ուշադրութեան է մնում նոցա համար որոնք ընդդէմ էին նորութեանը։ Բայց փոքր առ փոքր կանգնեցվում է մի շարք նոր տների, փողոցը մի ուրիշ տեսք է ստանում՝ լայն, գեղեցիկ, յարմար,—և ամեն մէկը տեսնողներից, մինչև անգամ թշնամիները ընդունում են այդ fait accompli (կատարված իրողութիւն) առանց վրդովվելու, առանց դանդատվելու։

Բայց ի հարկէ ժամանակ է հարկաւոր, որովհետև նրանք բացի ստորադրվողների փողերից ունեն կազմված բաժանորդական (ակցիոներ) ընկերութիւններ,—բայց դարձեալ կը փորձենք....

***

Շատ լաւ բան է ակցիոներ ընկերութիւնները լրագրերի համար։ Լրագրի ադմինիստրատորը ձեզ պատահում է փողոցում և սկսում է համոզել որ գրվէք ակցիային։ Դուք ի հարկէ հարցնում էք ինչքան արժէ ակցիա։ «Երկու հարիւր ռուբլ, պատասխանում է ձեզ պարոնը և այդ գումարը տալով ձրի կը ստանանք մեր լրագրի համարը։»—Իսկ այնպէս ստանալը ինչքան արժէ։—«Տասն և հինգ ռուբլ» պատասխանում է նա։—Ուրեմն ես աւելի լաւ է 15 ռուբլ կը տամ և ձեր լրագիրը կը ստանամ, քան թէ երկու հարիւր ռուբլ տամ, պատասխանում էք դուք։

Պ. Նիկոլաձէի «Обзоръ» լրագրի առաջին համարը, որ հրատարակվեցաւ յունվարի 1-ին, շատ ընդարձակ պրոգրամայով է դուրս եկել։ Նա չէ բաւականանում տեղական հարցերով, տեղական խնդիրների արծարծելով և տեղական շահերը պաշտպանելով, այլ ուզում է դասեր տալ ամբողջ ռուսաց լրագրութեանը, մայրաքաղաքների պրէսսային։ Կարելի է արդեօք դատառական մի քաղաքից, ինչպէս Թիֆլիսն է հրատարակել մի լրագիր, որ ուզենար մրցութիւն անել մայրաքաղաքների լրագրութեանը, նրան դասեր և հրամաններ տալ, նրա վրա արհամարհանքով, վերևից նայել,—այդ մեզ ծիծաղելի է երևում։

Մեզ թվում է թէ այդ տեսակ լրագիր իր ոտների տակ հիմք, հաստատ հող չունի։ Գոնէ «Тифл. Вѣстн.»իր ուղղութեամբ ստացել է մի հաստատ հիմք, ժառանգել է մի հաստատ անուն.... Նա յայտնի է որպէս սկանդալներ սիրող, հայհոյող, բամբասող.... Նրան անուանում են «Тифлисская Сплетница». Թիֆլիսցիները նրան սիրում են, կարդում են ուրախութեամբ, նա կծու, ծիծաղ շարժող է....

***

Այդ տասն և հինգ օրվայ մէջ որ մենք մեր համարները չը հրատարակեցինք ինչքան բաներ պատահեցան.... Իտալիայի թագաւոր Վիկտոր-Էմմանուէլը վախճանվեցաւ, ռուսաց բանասեղծ Նեկրասով նոյնպէս վախճանվեցաւ, քաղաքական կեանքի մէջ խօսում են Ռուսաստանի և Թուրքիայի մէջ զինադադարման վրա, խօսում են Անդլիայի պատերազմական պատրաստութեան վրա, խօսում են և շատ ուրիշ բաների վրա, որոնք դուցէ մեր ընթերցողներին չեն հետաքրքրում....

Բայց մեզ հետաքրքրում է մեր ներքին կեանքը և այդ պատճառով ես ուզում եմ ցանկութիւններ և բարեմաղթութիւններ յայտնել հայոց ազգին այս 1878 թ-ի համար, թէև դուցէ պէտք է անէի այդ նոր տարվայ օրը։

***

Ես ցանկանում եմ հայերին առհասարակ աւելի հաստատ ուսում և կրթութիւն, մեր ուսումնարաններին ես ցանկանում եմ զարգացած ուսուցիչներ և կրթված տեսուչներ, մեր լրագրութեանը ցանկանում եմ (որ գոյնի և ուղղութեան պատկանէր նա) բազմանալ և աճել, բայց չը յափշտակվել անձնական թշնամական զգացմունքով, մեր բարձր ուսում ստացած երիտասարդներին ցանկանում եմ աշխատասիրութիւն և աւելի մեծ տոկունութիւն իրանց աշխատանքի մէջ։ Մեր թիւրքիահայ հայրենակիցներին ես ցանկանում եմ աւելի հաստատամտութիւն, մեր ծնողներին աւելի մարդասէր վարմունք իրանց զաւակների հետ, մեր փոքրիկ սերունդին աւելի համբերութիւն իրանց կրած և կրելու ընտանեկան տանջանքների մէջ, մեր թատրոնին իր մահից յարութիւն առնելը, մեր բոլոր քաղաքներին առհասարակ և Թիֆլիսին մասնաւորապէս փողոցների մաքրութիւն և աւելի օրինաւոր լուսաւորութիւն, մեր քաղաքդասակարգերին աշխատանք և բաւականութիւն, մեր քաղաքային վարչութիւններին ցանկանում եմ աւելի հոգալ ժողովրդի անհրաժեշտ պիտոյքների մասին, աւելի քիչ խոսել և թղթեր մրոտել, բայց աւելի գործ կատարել։ Մեր կանանց և աղջիկներին ցանկանում եմ աւելի սիրել իրանց մայրենի լեզու և կրթել իրանց ունեցած և ունենալու զաւակներին հայոց լեզուով և ոգով, նոյնպէս ցանկանում եմ նրանց սիրել մարդիկներին առանց նիւթական հաշիւների։ Մեր ժողովրդական մարդիկներին ցանկանում եմ շարունակել անձնուիրութեամբ և անկեղծ կերպով սիրել իրանց ազգը, օգնել նրան, իրանց ոյժերի չափ, անդադար ուսումնասիրել նրա դրութիւնը, որի թէ լաւ և թէ վատ կողմերը նոքա իրանց վրա են կրում, աշխատել նրա համար առանց լոկ շահասիրական նպատակներ աչքի առաջն ունենալու, մեր կուսակրօն հոգևորականութեանը ցանկանում եմ ճշմարիտ քրիստոնէական մարդասէր ոգի, մեր քահանաներին ցանկանում եմ անձնական ազատութիւն, որպէս զի ճշմարիտ կարողանան նուիրել իրանց անձը ժողովրդի ծառայութեանը, մի և նոյն ժամանակ ցանկանումեմ նրանց իրանց պաշտօնի ճիշդ ճանաչութիւնը։

Իսկ ձեզ, ընթերցող, բարեմաղթում եմ, եթէ դուք տղամարդ էք աջողութիւն ձեր գործերի մէջ և անձնական բաղդ, իսկ եթէ կին էք՝ հանդիստ, անվրդով և բաղդաւոր կեանք ձեր ընտանիքում, եթէ աղջիկ էք՝ սէր, և նիւթական ապահովութիւն, որովհետև գիտեմ որ այդ երկու բանն էլ դուք ինքներդ ձեզ ցանկանում էք։

ՖԵԼԻԵՏՕՆ

Նոր տարի։—«Մշակի» ուշանալը։—Ամենօրեայ լրագիր։—«Тифл. Вѣстн.» լրագիրը և «Обзоръ» նոր թերթը։—Ակցիոներ ընկերութիւնը։—Պ. Նիկոլաձէի լրագրի առաջին համարը։—Ինչ բաներ պատահեցան տասն և հինգ օրվայ մէջ։—Մեր բարեմաղթութիւնները նոր տարվայ համար։—Ինչպէս են գրում ֆելիետօն և իմ ծանօթ օրիորդի խօսքերը։—Զարութիւն և սրամտութիւն։—Ինչ պատճառով հայերին տալ չէ կարելի։—Թիֆլիսի փողոցները և գիպչոզական հիւանդութիւնները։—Լրագրութիւնը։—Նոր լրագիր։—Մկների խորհուրդը։

—

Շնորհաւոր նոր տարի, ընթերցող։ Թէև փոքր ինչ ուշ եմ շնորհաւորում ձեզ, ընթերցող, բայց ինչ մեղաւոր եմ որ «Մշակը» ուշացաւ։

«Մշակի» տասն և հինգ օրով ուշանալն էլ իր պատճառն ունի։ Ախար պէտք է խմբագրութիւնը և խմբագրական ամբողջ մեքենան սարքվէին։ Հեշտ բան չէ մի ամենօրեայ լրագիր հրատարակել, և այն էլ հայերէն լեզուով։ Ռուսաստանի հայերի մէջ դա առաջին օրինակ է, ուրեմն «Մշակը» պէտք է կամ անպատճառ առջովի, կամ մեր լրագրութեան անունը յաւիտեան կորվի....

Գիտէք ինչ է նշանակում ամենօրեայ լրագիր,—դա նշանակում է որ ազգը այնքան զարգացաւ, որ նրան հարկաւոր է ամենօրեայ մտաւոր կերակուր։ Բացի սորանից ամօթ չէ՞ մեզ, հայերիս համար, եթէ ռուսաց և մինչև անգամ վրաց լրագրութիւնը արդէն ամենօրեայ է դարձել, իսկ հայոց լրագրութիւնը դեռ չէ կարող այդ դրութեանը հասնել։

Մեզ թէև դժուար է մրցութիւն անել «Тифл. Вѣстн» և «Обзоръ» ռուս ամենօրեայ լրագիրներին, որովհետև նրանք բացի ստորադրվողների փողերից ունեն կազմված բաժանորդական (ակցիոներ) ընկերութիւններ,—բայց դարձեալ կը փորձենք....

***

Շատ լաւ բան է ակցիոներ ընկերութիւնները լրագրերի համար։ Լրագրի ադմինիստրատորը ձեզ պատահում է փողոցում և սկսում է համոզել որ գրվէք ակցիային։ Դուք ի հարկէ հարցնում էք ինչքան արժէ ակցիա։ «Երկու հարիւր ռուբլ, պատասխանում է ձեզ պարոնը և այդ գումարը տալով ձրի կը ստանանք մեր լրագրի համարը։»—Իսկ այնպէս ստանալը ինչքան արժէ։—«Տասն և հինգ ռուբլ» պատասխանում է նա։—Ուրեմն ես աւելի լաւ է 15 ռուբլ կը տամ և ձեր լրագիրը կը ստանամ, քան թէ երկու հարիւր ռուբլ տամ, պատասխանում էք դուք։

Պ. Նիկոլաձէի «Обзоръ» լրագրի առաջին համարը, որ հրատարակվեցաւ յունվարի 1-ին, շատ ընդարձակ պրոգրամայով է դուրս եկել։ Նա չէ բաւականանում տեղական հարցերով, տեղական խնդիրների արծարծելով և տեղական շահերը պաշտպանելով, այլ ուզում է դասեր տալ ամբողջ ռուսաց լրագրութեանը, մայրաքաղաքների պրէսսային։ Կարելի է արդեօք դատառական մի քաղաքից, ինչպէս Թիֆլիսն է հրատարակել մի լրագիր, որ ուզենար մրցութիւն անել մայրաքաղաքների լրագրութեանը, նրան դասեր և հրամաններ տալ, նրա վրա արհամարհանքով, վերևից նայել,—այդ մեզ ծիծաղելի է երևում։

Մեզ թվում է թէ այդ տեսակ լրագիր իր ոտների տակ հիմք, հաստատ հող չունի։ Գոնէ «Тифл. Вѣстн.»իր ուղղութեամբ ստացել է մի հաստատ հիմք, ժառանգել է մի հաստատ անուն.... Նա յայտնի է որպէս սկանդալներ սիրող, հայհոյող, բամբասող.... Նրան անուանում են «Тифлисская Сплетница». Թիֆլիսցիները նրան սիրում են, կարդում են ուրախութեամբ, նա կծու, ծիծաղ շարժող է....

***

Այդ տասն և հինգ օրվայ մէջ որ մենք մեր համարները չը հրատարակեցինք ինչքան բաներ պատահեցան.... Իտալիայի թագաւոր Վիկտոր-Էմմանուէլը վախճանվեցաւ, ռուսաց բանասեղծ Նեկրասով նոյնպէս վախճանվեցաւ, քաղաքական կեանքի մէջ խօսում են Ռուսաստանի և Թուրքիայի մէջ զինադադարման վրա, խօսում են Անդլիայի պատերազմական պատրաստութեան վրա, խօսում են և շատ ուրիշ բաների վրա, որոնք դուցէ մեր ընթերցողներին չեն հետաքրքրում....

Բայց մեզ հետաքրքրում է մեր ներքին կեանքը և այդ պատճառով ես ուզում եմ ցանկութիւններ և բարեմաղթութիւններ յայտնել հայոց ազգին այս 1878 թ-ի համար, թէև դուցէ պէտք է անէի այդ նոր տարվայ օրը։

***

Ես ցանկանում եմ հայերին առհասարակ աւելի հաստատ ուսում և կրթութիւն, մեր ուսումնարաններին ես ցանկանում եմ զարգացած ուսուցիչներ և կրթված տեսուչներ, մեր լրագրութեանը ցանկանում եմ (որ գոյնի և ուղղութեան պատկանէր նա) բազմանալ և աճել, բայց չը յափշտակվել անձնական թշնամական զգացմունքով, մեր բարձր ուսում ստացած երիտասարդներին ցանկանում եմ աշխատասիրութիւն և աւելի մեծ տոկունութիւն իրանց աշխատանքի մէջ։ Մեր թիւրքիահայ հայրենակիցներին ես ցանկանում եմ աւելի հաստատամտութիւն, մեր ծնողներին աւելի մարդասէր վարմունք իրանց զաւակների հետ, մեր փոքրիկ սերունդին աւելի համբերութիւն իրանց կրած և կրելու ընտանեկան տանջանքների մէջ, մեր թատրոնին իր մահից յարութիւն առնելը, մեր բոլոր քաղաքներին առհասարակ և Թիֆլիսին մասնաւորապէս փողոցների մաքրութիւն և աւելի օրինաւոր լուսաւորութիւն, մեր քաղաքդասակարգերին աշխատանք և բաւականութիւն, մեր քաղաքային վարչութիւններին ցանկանում եմ աւելի հոգալ ժողովրդի անհրաժեշտ պիտոյքների մասին, աւելի քիչ խոսել և թղթեր մրոտել, բայց աւելի գործ կատարել։ Մեր կանանց և աղջիկներին ցանկանում եմ աւելի սիրել իրանց մայրենի լեզու և կրթել իրանց ունեցած և ունենալու զաւակներին հայոց լեզուով և ոգով, նոյնպէս ցանկանում եմ նրանց սիրել մարդիկներին առանց նիւթական հաշիւների։ Մեր ժողովրդական մարդիկներին ցանկանում եմ շարունակել անձնուիրութեամբ և անկեղծ կերպով սիրել իրանց ազգը, օգնել նրան, իրանց ոյժերի չափ, անդադար ուսումնասիրել նրա դրութիւնը, որի թէ լաւ և թէ վատ կողմերը նոքա իրանց վրա են կրում, աշխատել նրա համար առանց լոկ շահասիրական նպատակներ աչքի առաջն ունենալու, մեր կուսակրօն հոգևորականութեանը ցանկանում եմ ճշմարիտ քրիստոնէական մարդասէր ոգի, մեր քահանաներին ցանկանում եմ անձնական ազատութիւն, որպէս զի ճշմարիտ կարողանան նուիրել իրանց անձը ժողովրդի ծառայութեանը, մի և նոյն ժամանակ ցանկանումեմ նրանց իրանց պաշտօնի ճիշդ ճանաչութիւնը։

Իսկ ձեզ, ընթերցող, բարեմաղթում եմ, եթէ դուք տղամարդ էք աջողութիւն ձեր գործերի մէջ և անձնական բաղդ, իսկ եթէ կին էք՝ հանդիստ, անվրդով և բաղդաւոր կեանք ձեր ընտանիքում, եթէ աղջիկ էք՝ սէր, և նիւթական ապահովութիւն, որովհետև գիտեմ որ այդ երկու բանն էլ դուք ինքներդ ձեզ ցանկանում էք։

կաւոր, որ Նրանք սովորեն նորութեանը, հասկանան այդ նորութեան օգուտները, ընտելանան աւելի մաքուր օդի, աւելի յարմար և ընդարձակ բնակարանների....

Այնու ամենայնիւ դորանով գործը վերջացրած չէ,—չը խօսելով այն բանի մասին որ բացի գլխաւոր քաղաքից կան և ուրիշ փոքրագոյներ, որոնք պէտք է շինվեն,—առաջին, գլխաւոր փողոցը գծելու ժամանակն էլ կային տներ, որոնք մնացել էին չը քանդված, որովհետև պատահմամբ չէին գտնվում բուն ճանապարհի վրա։ Այդ ժամանակով և նրանց պէտք է քանդել, որովհետև այդ տներն էլ գծի վրա կանգնած չեն այլ ծուռ դէպի գլխաւոր ուղղութիւնը։ Այդ երկրորդական տները քանդելու համար նոյն սարսափելի այժ էլ հարկաւոր չէ, ինչպէս սկզբում։ ընդդիմադրութիւնը էլ այնքան սաստիկ չէ,—բայց և այդ զարկեր անել հարկաւոր է։

Թող ներեն մեզ այդ համեմատութիւնը, բայց մեր կարծիքով «Մշակի» գլխաւոր փողոցը գծագրված է և մի քանի նոր տներ արդէն կառուցված են այս նոր փողոցի վրա։ Գուցէ դրանք փոքրիկ և համեստ տներ են, բայց բոլորովին յարմարեցրած են ժամանակի պահանջներին։ Փոքր են Նրանք որովհետև առաջին ձեռնարկութիւնը շատ թանդ նստեց, շատ

Վերջապէս ամբողջ հայոց ազգին ցանկանում են բաղդաւոր կեանք և փող։

Իսկ «Մշակին» ցանկանում եմ շատ բաժանորդներ և տարվայ ընթացքում շատ յայտարարութիւններ։

***

Ներկայ ֆելիետոնս գուցէ ձեզ շատ սառն կերևայ, ընթերցող։ Այն նոր տարվայ բարեմաղթութիւնները միշտ լինում են սառն և պաշտօնական և իմ այս ֆելիետոնս մի տեսակ պաշտօնական բնաւորութիւն ունի։

Առհասարակ ֆելիետոն գրելը բաւական դժուար բան է, թէև իմ ծանօթ օրիորդներից մինը համաձայն չէ ինձ հետ։ Քանի մի օր սրանից առաջ նա ինձ հարցրեց արդեօք դժուար է առհասարակ ֆելիետոններ գրելու։ Ես ի հարկէ պատասխանեցի շատ դժուար է։ Օրիորդը ժըպտաց և պատասխանեց՝ «Իսկ ես կարծում եմ որ բոլորովին դժուար չէ. ֆելիետոն գրելու համար հարկաւոր է ինչսուն և ինն պրոցէնտ չարութիւն ունենալ և մի պրոցէնտ սրամտութիւն, և այդ յատկութիւններ ունեցող մարդը միշտ կարող է աջողութեամբ գրել ֆելիետոններ։»

Չը գիտեմ արդեօք ընթերցողները համաձայն են իմ ծանօթ օրիորդի խօսքի հետ, թէ ոչ, արդեօք նրանք ինձ այդքան չար և այդքան քիչ սրամիտ մարդ են համարում, ինչպէս որ ինձ համարում է օրիորդը,—չը գիտեմ։ Բայց ի հարկէ եթէ օրիորդը ինձ առհասարակ բարի մարդ է համարում, նա պէտք է ինձ վրա նայի որպէս անընդունակ ֆելիետոնիստի վրա։

Ինչ և իցէ ես ինքս զգումեմ որ այս անգամ ես ոչ չար եմ և ոչ սրամիտ, այլ ինչպէս հարկաւոր է իր ազգին և բարեկամներին բարեմաղթութիւններ անելու ժամանակ բարի և միամիտ եմ։ Այդ պատճառով էլ գուցէ իմ այսօրվայ ֆելիետոնս սառն է դուրս եկել....

փող, այսինքն մնաւորական այժ հարկաւոր էր գործը աջողութեամբ առաջ տանելու համար։ Այժմ խնայողութեամբ պէտք է վարվել այժերի հետ։

Առաջին ժամանակ եթէ բուն կապիտալը գործածվեցաւ, պէտք է այժմ աշխատել միայն տոկոսներով բաւականանալ, և այս, մեր կարծիքով, միակ բնական խելացի վարվելու ձևն է։

Երբեմն երբեմն այս կամ այն հին երևոյթ, հին բան քանդելու համար գուցէ էլի մայրդումարից մի մաս պահանջվի,—և այն ժամանակ (մենք բարոյապէս համոզված ենք դորա մասին), «Մշակը» Նրան չի խնայի։

Ա. Արծրունի.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԲԵՄԻՑ

«Մշակի» վերջին համարի հրատարակվելուց յետոյ պատահեցան հետևեալ մեծ-պատերազմական երկու բեմերի վրա։ Սօրանլուխի զօրքի մի գունդ պաշարեց Իլիջա գիւղը, որից յետոյ, դեկտեմբերի 24-ին թշնամին 8 զօրագունդով և 600 հեծելազօրքով հետախուզեց Էրզրումից մինչև Զիգանլեկը, բայց պատահելով Միւրկ գիւղի կողմից մեր երկու գունդերին փոքր ժամանակ հրացանաձգութիւնից յետոյ, յետ քաշվեց դէպի Էրզրում։ Մեր կողմից վերաւորված են երկու մարդ։—Լովչայից հեռագրումեն դեկտեմբերի 28—29։ Այսօր դեկտեմբերի 28-ին Պլէվնայի առումից ուղիղ մի ամիս յետոյ ռուսները նոր և փառաւոր յաղթութիւն արեցին։ Գեներալ Բաղէցկին, յուսահատ կռվից յետոյ գերի վերցրեց բոլոր Շիպկայի զօրքը։ Գերը գերի ընկան 41 բատալիոն, 10 թնդանօթ և հեծելազօրքի մի գունդը Ֆէրիկ Բեսէլփաշայի առաջնորդութեան տակ։ Լովչայից հեռագրումեն դեկտեմբերի 29-ին՝ Սօֆիաքաղաքը վերցրին մեր զօրքերը դեկտեմբերի 23-ին։ Սուլէյման փաշան Տաշկի-Սէնի ուի օրը եկաւ Սօֆիա և այնտեղից Իխտիմանի ճանապարհով գնաց Ֆիլիպպօլը։ Թուրքերը Սօֆիայում թողեցին 1,600 ծանր վերաւորվածներ և մեռնողներ, որով գեներալ Գուրկօին մեծ դժուարութեան մէջ ձգեցին, որովհետև սա չունէր իր հետ պաշար։—Մեր հեծելազօրքի մի բաժինը թուով հազար մարդ գեներալ Լօրիս-Մելիքովի առաջնորդութեամբ ուղարկվեցաւ յարձակվելու Ալաջայ գիւղ Տրապիզոնի ճանապարհի վրա, թշնամու 1500 մարդուց բաղկացած հեծելազօրքի վրա և ջարդելով նրանց հալածեց մինչև Կոսդաղա։ Գերի վերցրինք 1 սաստիճանաւոր—100 հասարակ զինուորներ. վերցրած է նոյն պէս մէկ դրօշակ, շատ հրացաններ, ձիաներ և բաւական հարստութիւն։ Դեկտեմբերի 28-ից Էրզրումի պաշարումն վերջնական որոշված է։ Երևանեան բաժնի հեծելազօրքը վերցրեց Մէլեազկերտ քաղաքը։—Օդէսայից հեռագրումեն դեկտեմբերի 30-ին որ այսօր երկու թիւրքաց թնդանօթաձիգ նաւերը մօտեցան Եւպատորիային 3 ժամ և 25 րոպէին և սկսեցին թնդանօթներ արձակել մինչև 5 ժամ և 50 րոպէ, մի քանի շլենութիւններ ֆլասված են, 7 մարդ է վերաւորված, ռմբակոծութիւնը շարունակվում է։—Եկատերինոդարից հեռագրումեն յունվարի 2-ին որ Անապի ռմբակոծութիւնը շարունակվում էր 2 ժամ և 10 րոպէ, ֆլասված են եկեղեցին և մէկ քանի տներ. սպանված են մէկ հովիւ և մէկ ձի։—Օդէսայից հեռագրումեն յունվարի 1-ին որ Թէոդոսիային մօտեցան թիւրքաց երկու թնդանօթաձիգ նաւեր և սկսեցին ռմբակոծել քաղաքը։ Բայց մեր զօրքի յաջող յարձակումից սարսափած թուրքերը յետ քաշվեցան. քանդվեցաւ 20 տուն, 1 զինուոր սպանվեցաւ, վերաւորված է 5 արտիլերիստ և 7 բնակիչ։—Շիպկայից հեռագրումեն 2—4 յունվարին որ ընդհանուր կռուստը դեկտեմբերի 27-ին և 28-ին եղած կռիւների մէջ այս է՝ սպանված են 19 սաստիճանաւորներ և 1083 զինուորներ, վերաւորված են 89 սաստիճանաւորներ և 4,246 զինուորներ. բացի սորանից երկու սաստիճանաւորներ մեռան վէրքից և ֆլասված են 16 սաստիճանաւորներ։ Զօրքից բոլորը 5,464 մարդ պակասեցաւ։ Գեներալ Կարցով հաղորդում է, որ թիւրքերը գցեցին իրանց ամրութիւնները Կօշնեցի և Կլիսուրի մօտ և յետ քաշվեցան Կօպրավշից, որտեղից դեկտեմբերի 28-ին գնդապետ կոմս Կամարօվսկու բաժինը հալածեց նրանց։ Հալածելու ժամանակ բազմաթիւ թիւրքեր սպանվեցան և 26 հոգի գերի ընկան։ Կարլօվում վերցրինք թիւրքերի թողած դրօշակը։ Մեր առաջապահ գունդը վերցրեց Էսկի-Զագրան որ բոլորովին քանդված դրութեան մէջն է գտնվում և բնակիչներից թողած։ Դեկտեմբերի 28-ին մեր վերցրած աւարի թիւը դեռ ևս վերջնական կերպով յայտնի չէ։ Հաշվումեն մօտ 81 թնդանօթ։ Դրօշակների թիւը դեռ ևս յայտնի չէ, Սկոբելևը վերցրել է 5 դրօշակ, իսկ հեծելազօրքը երկու։—Շիպկայից հեռագրումեն 2—4 յունվարի։ Դեկտեմբերի 30-ին գեներալ Վէլեամինով սաստիկ կռուից յետոյ վերցրեց Սամակօասն։ Մի և նոյն օրը կոմս Շուվալովի առաջապահ գունդը տիրեց վերջին բնական արգելքին որ գտնվում է Իխտիմանից դէպի Թաթար-Բազարջիկի ճանապարհի վրա—Տրօյանեան դռները, իսկ կոմս Դէրբալը մերի հեծելազօրքի բաժինը տիրեց Վիարինովին որը գտնվում է Թաթար-Բազարջիկից 15 վերստ հեռու։—Կ. Պոլսից հեռագրումեն յունվարի 16-ին որ երկուշաբթի օրը մեծ պատերազմ կար Թաթար-Բազարջիկի և Ֆիլիպպօլի մէջ, իսկ երեքշաբթի նա կրկին նորոգվեցաւ։ Սուլէյման փաշան տիրեց Ֆիլիպպօլի մօտ գտնված ամրութիւնները, յայտնելով մի և նոյն ժամանակ շուտով դատարկել քաղաքը։ Ռուսաց զօրքերը հասան Զերպալ և գնում են Էնի-Մահալէի վրա։—Շիպկայից հեռագրումեն 4—5 յուն. որ թիւրքերը թողեցին Սլիվնը և յետ քաշվեցան դէպի Եամբօլ։ Ճանապարհի վրա պատահած բոլոր պաշարը այրում են։ Գեներալ Սորուկօվ զրաղունների

***

Բայց իմ ծանօթի ասած խօսքերը ինձ համոզում են որ հայերի մէջ առհասարակ դժուար է ֆելիետոն գրել և երևի ֆելիետոնը դեր երկար ժամանակ հաստատ արմատներ չի գցի մեր լրագրութեան մէջ, որովհետև մեր հասարակական երևոյթները այնքան զզվելի են առհասարակ, որ մինչև անգամ չեն կարող մարդուն բարկացնել, չարացնել, այլ շատ շատ կարող են նրան զզվեցնել....

Եկէք ֆելիետոն գրեցէք, կծու, չար, ծիծաղաժարշ, թեթև սիրելի ֆելիետոն գրեցէք այն հասարակութեան մէջ, որտեղ ձեր չորս կողմ ուրիշ բան չէք տեսնում եթէ ոչ զզվելի, սիրտը խառնող երևոյթներ, որտեղ ձեր շուրջ ուրիշ բան չէք տեսնում եթէ ոչ կեղծաւորութիւն, չահասիրութիւն, անձնապաշտութիւն, յիմարութիւն և այդ բոլորի հետ միացած անընդունակութիւն և ծուլութիւն.... Ինչպէս չը զզվեք, ուրիշ ինչ զգացմունք կարող էք ունենալ այդ տեսակ զզվելի երևոյթներ տեսնելով, եթէ ոչ զզվանք, արհամարհանք։

Ատել կարելի է միայն թշնամուն, պատելի թշնամուն։ Ատելութեան զգացմունքը ստոր զգացմունքներից չէ։ Ատել կարելի է մի այժ, մի նշանաւոր զօրութիւն, մի նշանակութիւն ունեցող անձնաւորութիւն կամ երևոյթ...

Բայց մեզ, մեր ներքին կեանքում, չրջապատում են այնպիսի փոքրիկ, զզվելի, ողորմելի երևոյթներ, այնպիսի չնչին, թշուառ անձնաւորութիւններ,—որոնց կարելի է միմիայն խղճալ և որոնցից կարելի է զզվել, բայց որոնք արժանի չեն ատելութեան զգացմունքի։

Կարելի է արդեօք ատել կեղտը, աղբը կամ փողոցի անմաքրութիւնը։—Անկարելի է։

Այդ տեսակ երևոյթներից կարելի է միմիայն զզվել։ Այս կեղտը, անմաքրութիւնը տեսնելով ու այդ անմաքրութեան հոտը առնելով մարդու մէջ չէ ծնվում ատելութեան զգացմունքը, բայց եթէ այն մարդը հասարակ մշակ է, նա սառը կերպով ձեռքը վեր է առնում մի ավել և սկսում է մաքրել, ավելել և իսկակել անմաքուր տեղը, իսկ եթէ նա արիստոկրատ է, ազնուական է, քնքոյշ զգացմունքների տէր մարդ է, կամ սիրուն, քնքոյշ կին է,—նա անմաքրութիւնը տեսնելով ու նրա հոտն առնելով երեսը դարձնում է միւս կողմը և շտապով տանում է իր քթին օդըկոլոնիով թաց արած աղլուխը.....

***

Անմաքրութեան վրա խօսելով ակամայ յիշեցի Թիֆլիսի փողոցների սարսափելի անմաքրութիւնը, և այն որ այդ անմաքրութիւնը երևի մասամբ պատճառ է լինում որ մեր քաղաքում տարածված են այժմ սարսափելի էպիդեմիաներ, տարափախիկ հիւանդութիւններ։ Վերջին ժամանակները ասում են որ մեռնողների թիւը Թիֆլիսում բաւական շատ է։

Բայց մեր քաղաքում տիրապետող տարափոխիկ և դիպչողական հիւանդութիւններից ամենասարսափելին լրագրութեան դիպչողական ցաւն է։

Դա ճշմարիտ մի տեսակ հիւանդութիւն է դարձել մեզանում։ Տեսէք ինչքան լրագիրներ կան արդէն Թիֆլիզում և ինչքան նոր լրագիրներ պէտք է հրատարակվեն ներկայ 1878 թվին։ Մենք ունէինք արդէն երկու ռուսաց ամենօրեայ լրագիրներ „Тифл. Вѣстн.“ և „Кавказъ“, բացի սորանից այս տարի սկսեցին հրատարակվել դարձեալ երկու ամենօրեայ ռուսաց լրագիրներ „Тифлисскія Объявленія“ և “Обзоръ“։ Մենք ունենք երեք վրաց լրագիրներ, որոնցից մինը ամենօրեայ է։ Ունենք հայերէն լեզուով մի ամենօրեայ թերթ, մի ամսագիր (փորձ), մի շաբաթաթերթ (Մեղու Հայաստանի), բացի սորանից դիտաւորութիւն կայ հրատարակել մի նոր Մանկավարժական լրագիր հայերէն լեզուով, նոյնպէս մի լրագիր «Պսակ» անունով և դաձեալ մի նոր լրագիր, որի անունը մեզ անյայտ է և որ պէտք է պահպանվի բաժանորդական ընկերութեամբ։

Փառք քեզ Աստուած. շուտով մենք աւելի լրագիրներ կունենանք քան թէ կարդացողներ։ Ասումեն որ նոր հայերէն լրագիրը կը հրատարակվի օրը երեք անգամ՝ վաղ առաւօտեան, կէսօրին և երեկոյեան, ինն ժամին....

***

Ասումեն որ նոր հայերէն, օրը երեք անգամ հրատարակվող լրագրի խմբագրութեան անդամները նորերումս հաւաքվեցին մասնաւոր տան մէջ և ունեցան իրանց ձեռնարկութեան մասին խորհուրդ մեծ և սքանչելի։

Երբ որ ինձ պատմեցին այդ ժողովի մասին, չը գիտեմ ինչի ես յիշեցի Էգիպտոսի առակներից մինը, որ և կը պատմեմ այժմ ընթերցողներին։

Մի օր մկները սաստիկ ձանձրանալով կատուից, որ նրանց անդադար որսումէր, կազմեցին մի խորհուրդ, և այդ խորհուրդի մէջ մկներից մինը առաջարկեց կախանել կատուի վզից մի զանգակ, որպէս զի մկները ամեն անգամ իմանան զանգակի ձայնից խորամանկ կատուի մօտենալու մասին։ Ամբողջ ժողովը ողորմութեամբ ընդունեց ճարտարախօս մկան առաջարկութիւնը։ Բայց երբ սկսեցին քուէ դցել թէ ով պէտք լինի այն համարձակ մուկը որին վիճակված կը լինի իրագործել ժողովի վճիռը, այսինքն մօտենալ կատուին և նրա վզից կախ անել զանգակը,—ոչ ոք չը գտնվեցաւ որ այդ յանձն առնէ և մկներից իրաքանչիւրը այդ պարտաւորութենից հրաժարվեցաւ։

Ասիացի

հետ միասին, յունվարի 2-ին երեկոյեան, հասաւ մինչև Աշտարակ։ Թիւրքերը ամեն տեղից փախչում էին։ Այսօր Նորին Կայսեր. Բարձր. Դունայ զօրքի գլխաւոր հրամանատարը հեռագիր է ստացել, որի մէջ յայտնում են Նրան, որ Սերվէրը փաշան և Համիկ փաշան գնում են նրա մօտ խաղաղութեան պայմանների վրա խօսելու։ Նրանց սպասում են այնտեղ յունվարի 5-ին կամ 6-ին։ Մեր զօրքերը առանց յապաղելու առաջ են գնում։ Թիւրքաց զօրքերը գնում են դէպի Աղրիանօպոլ։ Ինչպէս դրագունները պատմում են, Սուլէյման փաշան որ Ֆիլիպօպոլում է գտնվում, հրամայեց բոլորն այրել և սպանել։ Ասում են որ Բաղարջիկը և Ֆիլիպօպոլը այրվում են։ Շիպկայից հեռագրում են յունվարի 4-ին որ Կարցովի բաժինը Սկոբելևի առաջնորդութեամբ, մտաւ Ֆիլիպօպոլ։ Բոլգարացւոց խանութները այրվում էին, բայց մեր զօրքերը կարողացան հանգցնել հրդեհը։

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

20-ին Դեկտեմբերի 77.

Արդէն ձեր պատուական լրագրի մէջ կարդացինք, որ Թիֆլիսում ցաւ կայ տարածուած, որը առաջացած է փողոցների և ճանապարհների անմաքրութենից։ Նոյն իսկ անմաքրութիւնը տեսնումենք և մեր քաղաքում։ Փողոցներում պատահում ենք սատակած շների, կատուների հաւերի և ուրիշ զանազան անմաքրութեանց, որոնք թափած են փողոցների անկիւններում։ Ի հարկէ սա քաղաքիս պօլիցիայի պարտաւորութիւն է, որ պէտք է խստիւ արգելէ թափել քաղաքներում անմաքրութիւնները և թափած անմաքրութիւնները կամ ժողովրդեան հաւաքել տայ, կամ թէ քաղաքային ծախսով հեռացնէ քաղաքից դուրս։ Բայց որքան գնում է ժամանակը, այնքան էլ բազմանում են այս անմաքրութիւնները և փողոցներում լցվում են։ Այս բոլորի հոգատարութիւնը կախուած է քաղաքիս վերակացուից (приставъ) որը պէտք է մաքրութեան համար հոգս տանի, որովհետև այդ անմաքրութիւններից կը գոյանան զանազան տարափոխիկ ախտեր։

Ամսոյս 17-ին քաղաքիս մէջ մի անցք պատահեցաւ, որի մասին կարծեմ, ոչ մի պօլիցիական տեղեկութիւն չունի։

Մի մարդ զուրկ մնալով բոլորովին տղայ զաւակից և առատանալով աղջիկներով մինչև հինգը, սկսում է ճնչել և զանազան միջոցներով ուզում է իր աղջիկներին միւս աշխարհը ուղարկել։ Բայց այդ Նրան չէ աջողում։ Վերջապէս խստաբառ ճանձրանալով, 12 տարեկան մեծ աղջկանից, բոլոր նրանից հագուստը հանելով, մերկ դրան սիւնից կապում է և առանց մի որ և իցէ ուտելիքի և խմելիքի թողնում է մինչև 15 օր։ Քաղաքիս ոստիկ ցուրտ եղանակը մի կողմից, քաղցածութիւնը և ծարաւութիւնը միւս կողմից խեղճ, ողորմելի աղջկան մեծ տանջանքներով մեռցնում են։ Այս անցքի պատմողը, որը դրացի է յիշեալ որդեսպանին ասում է թէ նա համոզվածէ, որ միւսներին էլ նոյն կերպիւ կը վերջացնէ։ Զարմանալին այս է, որ մեր պօլիցիականները մինչև այսօր տեղեկութիւն չունեն այդ մասին չը նայելով որ մեր քաղաքում ամեն օր չրջումեն մինչև քանի եաուլներ։

Ն. Բ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Բարձրագոյն հրամանով հաստատված ԲԱԳՈՒԻ Մարզասիրական Ընկերութեան խորհրդական ժողովի 1877 թ. հաշիւը պիտի առաջարկվի ընկերութեան բոլոր անդամներին յունվարի 25-ին։

—

ԵՐԵՒԱՆԻՑ հաղորդում են, որ պ. Տիգրան Ափրիկեանը, կատարելով իր հանգուցեալ հօր վերջին կամքը, վճարել է Գ. օրիորդաց դպրոցին 100 բուբլ, իսկ հոգևոր թեմական դպրոցին 700 բուբլ։ Այդպէս է արել և ասոիճանաւոր Յովհաննէս Աւետեանցը, որ իր Գէորգ որդու մահվան պատճառով, փոխանակ հոգու հացտալու, փող է բաժանել աղքատներին, իսկ օրիորդաց դպրոցին 50 բուբլ է նուիրել։ Նամակագիրը աւելացնում է, որ հասարակութեան մէջ յօգուտ դպրոցի սաորագրութիւն է բացվել և շատերը նշանաւոր նուէրներ են անում։ Նուիրատուների անունները կը տպվեն։

—

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ «ՓՈՔՐԻԿ ՄԷԳԸ ԵՒ ՆՈՐԱ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ» գրքոյկը, գործ տիկին Սարեանոնի, թարգմանութիւն օր. Դարիա Գասպարեան Սահակեանի։ Նոյն գրքոյկից ստացանք 20 օրինակ, որի գինը թարգմանող օրիորդը նշանակել է յօգուտ դաղթականների։ Գրքոյկի գինը 25 կոպէկ է, ծախվում է բոլոր գրավաճառների մօտ։ Չենք կարող չը համակրել օրիորդի գեղեցիկ գործին։ Յանկանում ենք, որ դրա օրինակին շատ հետեւողներ գտնվին։ Օրիորդ Սահակեանը Մարիամեան ուսումնարանի աշակերտուհիներից է։ Մենք կարդացինք այդ գրքոյկը, օրիորդը աւելի լաւ նիւթ թարգմանութեան համար չէր կարող գտնել։ Թարգմանչուհու լեզուն բաւական թեթև և կոկած է։ Օրիորդը մեծ ծառայութիւն կանէր հայ հասարակութեան եթէ չարունակէր իր օգտաւէտ գործունէութիւնը։ Երևի շատ հայ մանուկներ շնորհակալ կը մնան իրանց բարեկամուհուց։

—

Շնորհակալութեամբ ստացանք Օրացոյց 1878 թուականի հանդերձ դուշակութեամբ օդոց, խմբագիր և հրատարակիչ պ. Աբգար Գուլամիրեանից։ Օրացոյցը տպած է Երևան։

—

Աղէքսանդրապոլից հաղորդում են, որ այնտեղ և Ղարս տարածված է տիֆ հիւանդութիւնը։ Ղարսում դա աւելի սաստիկ է։

—

«Արարատի» մէջ կարդում ենք հետեւեալը։ «Սեւանու անապատէն փոխադրուելով Ս. Հռիփսիմեայ վանուց միաբան կարգուած Յովակիմ Պաղտասանց Օշականցի և Աստուածատուր Տէր-Սարգսեանց Պարղեանց Հ. Նախիջևանցի աբեղայք՝ Իրեանց յանձն առած և ուխտած կրօնաւորական կարգի ընդդէմ՝ միանդամայն Քրիստոնէական զգացմանց և պարտաւորութեանց հակառակ՝ դրամանենգութեան քրէական յանցանաց մէջ մեղսակից գտնվելով և ատուգվելով հեռագօութեամբք և քննութեամբ Քաղաքական Իշխանութեան, ուստի և այսուհետև եկեղեցականութեան անունը և կոչումը կրելոյ՝ ինչպէս նաև ի տաճարի Տեառն Աստուծոյ ծառայելոյ իսպառ անարժան դատվելով, ըստ հրամանի Վեհ. Հայրապետի ամենայն Հայոց՝ այսօր յ30-ն ամսոյս (Նոյեմբերի) բոլորովին լուծվեցան և զրկվեցան ի Քահանայական և ի Կրօնաւորական կարգէ և աստիճանէ, և մերկացուցեալ յեկեղեցական զգեստուց իբրև լոկ աշխարհական յանձնվեցան Քաղաքական Իշխանութեան։»

—

Ստացանք յօգուտ դաղթականների պ. Յովհաննէս Աղամալեանցից 15 բուբլ որ և հասցրինք ԹԻՖԼԻՍԻ Մանուկ Ժողովին։

—

Ստացանք ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ քաղաքից պ. Առաքելեանցի ձեռքով յօգուտ դաղթականների հաւաքած 50 բուբլ որ և հասցրինք Թիֆլիսի Մանուկ Ժողովին։

—

ԹԻՖԼԻՍԻ մէջ ձմեռը այս տարի չէ կամենում անցնել։ Յունվարի 1-ին սկսեց կրկին սաստիկ ձիւն գալ, այնպէս որ կրկին Թիֆլիսցիները բալխիրներով էին մաղ գալիս։ Բայց յունվարի 4-ից կրկին ձիւնը հալվեցաւ։ Մի քանի օր ցեխը անտանելի էր փողոցներում։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ ստացանք Ե. Ս. տիկնոջից 6 բուբ. 60 կոպ. յօգուտ հայ դաղթականների։ Այդ փողը գոյացել է գրքերի ծախելուց։

—

ՕԿՈՒՄ քաղաքից ստացանք պ. Պուղեանցից նրա ջանքերով յօգուտ հայ դաղթականների սաորագրութեամբ հաւաքած 41 բուբլ։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Ցեղիս առաջին հարուստներից մինի, Մկրտիչ Ափրիկեանի յօգուտ հայ դպրոցների կտակած փողի գումարի վրա նրա որդին նոյնպէս աւելացրել է մի քանի հարիւր բուբլ։ Դա մի հաղագիւտ երևոյթ է որ հարուստ մարդը իր մահից յետոյ թողնում է արժանաւոր և զարգացած ժառանգ։»

—

Չենք կարող մեր ընթերցողների ուշադրութիւնը չը դարձնել մեր ներկայ համարում արտաված ՇՈՒՇՈՒՑ գրած նամակի վրա։ Այդ նամակի մէջ պատմվում է մի անցք որ նոր լոյս է ղցում մեր ընտանեկան կեանքի պակասաւոր կողմերի վրա։ Այդ երևոյթը զարթեցնում է մեր մէջ տխուր մտածմունքներ և դրդում է մեզ ընդհանրացնել հարցը և զուցէ չուտով ներկայացնել մեր ընթերցողներին մեր ընտանեկան բարոյականութեան մասին մի մշակված առաջնորդող յօդուած։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՏԱԼԻԱՅԻ ԹԱԳԱՒՈՐ ՎԻԿՏՈՐ-ԷՄՄԱՆՈՒԷԼ II-Ը

—

Անցեալ 77 թուի դեկտեմբերի 28-ին Հռոմի մէջ մեռաւ Վիկտոր-Էմմանուէլ Բ. Իտալիայի թագաւորը։

Ահա նրա կենսագրութիւնը։

Նա էր առաջին զաւակը և ժառանգը Սարդինիայի Կարլ-Ալբերտ թագաւորին։ Ծնված էր 1820 թուին, և կրում էր իր վրա «Սավոյեան-Դուքս» տիտղոսի անունը. իսկ 1842 թուին, ապրիլի 12-ին ամուսնացաւ Ադելհայդ դքսուհու վրա որ, աւստրիական Թոսքեր դքսի աղջիկն էր (Ծնված 1822-ին յունիսի 3-ին, իսկ վախճանեցաւ յունվարի 20-ին 1855 թուին)։ Մանկութենից զինուորական կրթութիւն ստանալով՝ նա մասնակցեց 1848 և 1849 թուի պատերազմներում իր հօր հետ միասին և ամենքին զարմացրել էր իր անօրինակ քաջութեամբ։ Նավարայի մօտ կրած պարտութենից յետոյ որ տեղի ունեցաւ 1849-ին, մարտի 23-ին, Կարլ-Ալբերտը հրաժարեցաւ գահից յօգուտ իր թագաժառանգ որդուն և առանձնացաւ Պրեռնեան թերակղզում որտեղ իր բերանցի հրաժարումը պաշտօնապէս հաստատեց Տօլոսի մէջ 1849-ին ապրիլի 3-ին։ Այսպիսով՝ Վիկտոր-Էմմանուէլը Սարդինիայի գահի վրա է բարձրանում շատ անաջող հանգամանքներով։ Նա մէկ կողմից պատերազմը պիտի վերջացնէր, իսկ միւս կողմից երկրի ներսում տիրապետած յեղափոխութիւնը նուաճէր։ Աւստրիայի հետ դրամական ծանր զոհողութիւններով հաշտութեան դաշը կապելուց յետոյ և ռամկավարական կուսակցութեան ծայրայեղ պահանջողութեանցն էլ սահման դնելով՝ նա մի և նոյն ժամանակը խոստացաւ սրբութեամբ պահել իր հօր շնորհած սահմանադրութիւնը և նորա հետ կապ ունեցող կազմակերպութիւնքը։ Այդ խոստմանը նա մնաց բոլորովին հաւատարիմ մինչև իր կեանքի վերջը, այդ պատճառաւ էլ նորա համար ասին թէ՝ «Il re galantuomo» (թագաւորը—աղնիւ մարդ է)։ Այդ միջոցներում, երբ Իտալիան նորից աւստրիական տիրապետութեան և ազդեցութեան ներքոյ էր ընկնում, Սարդինիան մենակ օազուս էր քաղում իր բարեկամութենից, իր ազատ և առաջադէմ օրէնքներից, և ծածուկ պատրաստվում էր նորից ձեռնամուխ լինելու վճռելու Կարլ-Ալբերտի աւանդած ազգայնութեան մեծ-խնդիրը—Իտալիայի ազատութիւնը օտար տիրապետութենից։ Այս պարագայում Վիկտոր-Էմմանուէլը միշտ երևելի—ազգասէր և երևելի պետական անձն կամ Կավուրի խորհրդոնն էր վարվում, որ 1852—1859 և 1860—1861 թիւը նրա առաջին նախարարն էր։ Որչափ որ իր յարաբերութիւնները վատանում էին դէպի Աւստրիան, այնքան աւելի մեծ եռանդով արևմտեան տէրութեանց պաշտպանութիւնն էր փնտռում, որոնց հետ արևելեան պատերազմի ժամանակ Ռուսիայի դէմ դաշնակցութիւն կազմեց նոցա հետ։ Ինքը թագաւորը, Կավուրի առաջնորդութեամբ 1853 թուին, այցելութիւն արաւ Փարիզի և Լոնդոնի արքունեաց և սպասածից աւելի սիրով և բարեկամական ցոյցերով ընդունվեցաւ։ Սարդինական քաղաքականութեան օրինաւոր պաշտպանը իսկապէս Նապոլէոն III-ը հանդիսացաւ։ Իրանց դաշնակցութիւնը աւելի ամրացնելու համար, Վիկտոր-Էմմանուէլը իր մեծ աղջիկ Կլոտիլդան իշխան Հերոնիմոս Նապոլէոնին կնութեան տուաւ, յունվարի 28-ին 1859 թուին, և դորանով կապվեցաւ մի ընտանեկան դաշնադրութիւն Սարդինիայի և Ֆրանսիայի մէջ։ Դրանից յետոյ իսկոյն, 1859 թուին բացվեցաւ իտալական պատերազմը, որի մէջ թագաւորը իր քաջութիւնը աւստրիացւոց նորից ցոյց տուաց։ Յունիսի 8-ին, Նապոլէոն III-ի հետ նա փառաւորութեամբ Միլան մտաւ և Վիլլաֆրանկեան և Ցիւրիխեան հաշտութեան դաշանց հիման վրա աւստրիական Լոմբարդիան նորան տրվեցաւ։ Տոսկանայի Մեծ-Դքսութիւնը և Էմիլիայի դաւառները որոնք պատերազմի ժամանակ իրանց տիրապետող իշխաններին դուրս էին արել և գրել էին իրանց Սարդինիայի հովանաւորութեան ներքոյ հետևեալ զարնան միացան Սարդինիայի հետ։ 1860 թուին ապրիլ և մայիս ամիսներում նա ինքը նոցա հպատակութեան երդումը անձնականապէս ընդունեց։ Այդ երկիրների միանալը դիւրութեամբ գլուխ չեկաւ. դրա փոխարէն Նապոլէոն III-ը առաւ Վիկտոր-Էմմանուէլի ժառանգական երկու հողեր—Սավոյեան և Նիցցայի կոմսութեան մեծ մասը։ Այդ միջոցներում զորապետ Գարիբալդին իր սեփական պատասխանատուութեամբ ձեռք զարկաւ ազատել Թագաւորութիւնը Միացեալ-Սիկիլեաններին իր զրօշակի վրա գրելով Վիկտոր-Էմմանուէլի անունը։ Բայց Գարիբալդին չուներ այնչափ ոյժ, վերցնել Նէապոլիտական—Թագաւորութեան վերջին ապաստանարան—Գաէտան։ Այդ միջոցներում պապական երկրում չը նայելով մեծ զինավարութեանց, ապստամբութիւններ ծագեցան։ Նէապոլի եկեղեցական կալուածների համեստ և անխռովասէր կուսակցութիւնքը գիտեցին Սարդինիա, խնդրելով նրան միջամտել իրանց գործերում, որը ամենամեծ ուրախութեամբ յանձն առաւ Սարդինիան։ Երբ Սարդինիան 1860 թուին տիրապետեց պապական երկրին ար. Պետրոսի ժառանգութիւն» ասուած տեղի բացառութեամբ, 1860 թուին սեպտեմբեր ամսին ինքը Վիկտոր Էմմանուէլը անձամբ Նէապոլիտական երկրի սահմանը մտաւ և նոյեմբերի 7-ին նրա մայրաքաղաք Նէապոլը մտաւ, որտեղ Գարիբալդին իր դիկտատորութիւնը նրան յանձնեց։ Այսպիսութեամբ մինչև 1860 թուի վերջը, բոլոր ներքին Իտալիան միացաւ Սարդինական թագաւորութեան հետ։ Այն ժամանակ Վիկտոր-Էմմանուէլը օրինաց հիման վրա, 1861 թուին, մարտի 17-ին «Իտալիայի թագաւոր» տիտղոսը ընդունեց։ Դրանից յետոյ յանկարծակի մեռաւ նրա մեծ-նախարար Կավուրը, և այդ օրից սկսված իտալական քաղաքականութիւնը չը կարողացաւ առաջվայ պէս հաստատ և աներկիւղ քայլերով առաջ խաղալ։ Թէպէտ թագաւորը իրան հեռու էր պահում անսահմանադրական միջամտութիւններից պարլամենտական կուսակցական վիճաբանութեանց մէջ, այնու ամենայնիւ, նա համարվում էր ջերմ պաշտպան Ֆրանսա-իտալական դաշնադրութեան և զանազան անաջող փորձերը հաշտվելու պապականութեան հետ՝ նորա անձնական ազդեցութեանն էին վերաբերում։ Նոր դաշնադրութեան զօրութեամբ որ տեղի ունեցաւ 1864 թուին սեպտեմբեր ամսին Ֆրանսիայի և Իտալիայի մէջ, Վիկտոր-Էմմանուէլ թագաւորը 1865 թուի գարնան Տուրինից Ֆլորենցիա տեղափոխվեցաւ, որը Իտալիայի մայրաքաղաք անուանվեցաւ։

Երբ ծագեցաւ 1866 թուի պատերազմը Պրուսիայի և Աւստրիայի մէջ, Վիկտոր-Էմմանուէլը

մանուէլը որպէս դաշնակից Պրուսիայի, անցաւ աւստրիական սահմանի Մենչիո գետից, բայց յունիսի 24-ին կատաղի դիմադրութենից յետոյ պարտութիւն կրելով Կուստոցի մօտ, ստիպվեց նորից յետ անցնել մինչև գետը։ Աւստրիացւոց Կէնիգրեցի մօտ կրած պարտութենից յետոյ, Աւստրիան յայտնեց իր ցանկութիւնը առանձնակի հաշտութիւն կապել Իտալիայի հետ Վէնէտկեան գաւառը նրան տալով։ Վիկտոր-Էմմանուէլը չը կամեցաւ դաւաճանել իր դաշնակցին, և շարունակեց պատերազմել, չը նայելով Ֆրանսիայի խրատներին։ Խաղաղութիւնը որ տեղի ունեցաւ Վիէննայում (հոկ. 3-ին 1866 թ.) այն հետևանքը բերեց որ ամբողջ Լոմբարդա-Վէնէտիկեան երկիրը իրան տրվեցաւ, Լոմբարդական երկաթեա թագի հետ միասին, որից յետոյ նա սեպտեմբերի 7-ին մտաւ Վէնէտիկ, որի բնակիչները ընդունեցին նորան ամենամեծ ոգևորութեամբ։

1866 թ. սեպտեմբեր ամսին Ֆրանսիական զօրքերը պապական երկրից դուրս եկան, բայց երբ 1867 թ. իտալական կամաւորները, Գարիբալդիի հրամանատարութեան ներքոյ, սկսան սպառնալ Հռոմին, նոյեմբերի 3-ին 1867-ին Ֆրանսիացիք նորից վերադարձան և Ֆրանսիական և պապական զօրքերը միացած ջարդեցին գարիբալդականներին Մէնտանայի մօտ և եկեղեցական սահմանից դուրս վռնտեցին։ Իտալական կառավարութիւնը որ սկզբումը այդ շարժողութեան կատարեալ ազատ ընթացք էր տուել, հնազանդեցաւ Ֆրանսիայի կամաց և իր կողմից այդ տեսակ հետևանքի առաջը առնելու ոչ մի միջոց չը գործ դրեց։ Այս վարմունքը ընդհանուր անբաւականութիւն յարուցեց. և Ֆլորէնցիայի և Տուրինի մէջ ցոյցեր տեղի ունեցան, որոնք թագաւորի անձի դէմ էին ուղղված։ 1868 թ., թագաժառանգ Ումբերտ իշխանի ամուսնութեան առթիւ, հասարակութեան համակրութիւնը նորից նորա կողմը անցաւ։ 1870 թ. հոկտեմբերի 2-ին, Ֆրանսիական հեռագիրը Ֆլորէնցիայի մէջ իմաց արաւ թէ՝ Ֆրանսիան իր զօրքերը Հռոմից յետ է կանչում և այդպիսութեամբ Ֆրանսիան և Իտալիան նորից —վերադառնում են սեպտեմբերեան դաշնադրութեան սկզբանը վրա։ Բայց երբ ստացվեցաւ Ֆրանսիական զօրաց Սէդանի մօտ կրած պարտութեան լուրը, իսկոյն ձախակողմեան երեսփոխանք իտալական ազգային ժողովի, յայտնեցին իրանց պահանջմունքը նախագահ նախարարին որ իսկոյն Հռոմը զօրքով բռնեն։ Կառավարութիւնը սկզբումը փոքր ինչ տատանվում էր, բայց Ֆրանսիական կայսրութիւնը ընկնելուց յետոյ, Հռոմը տիրապետելու վերջին արգելքն էլ հետը միասին ընկաւ։ Այդ միջոցին Իտալիայի արտաքին գործոց նախարար Վիսկոնտի-Վէնոստին մի ծանուցագիր ուղարկեց բոլոր տէրութիւններին, որի մէջ յայտնում էր թէ՝ «իտալական կառավարութիւնը, պապի և Իտալիայի ընդհանուր ապահովութեան համար, պապական երկրի հարկաւոր եղած կէտերը բռնելով՝ պատրաստ է միշտ, ինչպէս առաջ՝ այդ մասին համաձայնել միւս տէրութիւնների հետ, պապի հոգևոր իշխանութեան անկախութիւնը պահելու համար»։ Դորանից յետոյ, երբ սկսած բանակցութիւնները Պիոս IX-դի հետ չունեցան ոչ մի հետևանք, իտալական զօրքերը սեպտեմբեր 11-ին պապական սահմանը մտան, 20-ին տիրապետեցին Հռոմին իսկ 22-ին, այսպէս ասված Լէոնեան Բարձրաւանդակը։ Ժողովրդեան քուէարկական 133,681 ձայների բազմութեամբ, ընդդէմ 1,507 ձայների պապական երկիրը Հռոմի հետ մէկ տեղ թագաւորական հրովարտակով միացաւ Իտալիայի հետ։ Թագաւորական փոխարքայ սկզբներում նշանակվեցաւ հանգուցեալ Լամարմօրա զօրապետը։ Երկրորդ ծանուցագրով՝ Վիսկոնտի-Վէնոստին հոկտեմբերի 18-ից յայտնեց արտասահմանեան տէրութեանց կատարված և տեղիք ունեցած իրողութիւնների մասին, որոնց Պիոս IX-դի ոչ անէծքը և ոչ էլ բողոքը ոչինչ չը կարողացան փոխել։

Այն շարժողութիւնը որ սկսուած էր շատ ժամանակից ի վեր և որ պէտք էր Իտալիան միացնէր, ահա այսպիսութեամբ իրան տուած խնդիրը լուծեց և Հռոմը Իտալիայի մայրաքաղաքը դարձաւ։ Երբ Վիկտոր-Էմմանուէլ թագաւորը 1870-ին դեկտեմբերի 31-ին մտաւ Հռոմ ինչպէս թագաւոր, ժողովուրդը ընդունեց նորան ամենամեծ ոգևորութեամբ, թէպէտ և մայրաքաղաքի պաշտօնապէս տեղափոխվելը տեղի ունեցաւ 1871 թ. յունիսի 3-ին։ Իտալական պարլամենտը բացվեցաւ նոյեմբերի 27-ին, որտեղ թագաւոր Վիկտոր-Էմմանուէլը իր գահական ճառի մէջ իրաւունքով յայտնեց «աւարտեցի գործը, որին նուիրել էի իմ ամբողջ կեանքը»։

Վիկտոր-Էմմանուէլի Ադելհայդ թագուհու հետ ունեցած ամուսնութենից մնացին ներկայիս կենդանի չորս զաւակներ. 1) Իշխանուհի Կլոտիլդան, ծնուած մարտի 2-ին, 1843 թուին և ամուսնացած Հերոնիմոս Նապոլէօնի հետ՝ յունիսի 30-ին 1859 թուին. 2) Թագաժառանգ իշխան (այժմեան թագաւորը իտալիոյ) Ումբերտը, ծնուած մարտի 14-ին 1844 թուին և ամուսնացած ապրիլ 22-ին 1868 թուին Սավոյեան Մարգարիտ իշխանուհւոյ հետ, որ հանդուցեալ Ֆերդինանդ-Ջենուացի դքսի (Վիկտոր Էմմանուէլի փոքր եղբայրը) աղջիկն է. 3) իշխան Ամեդէյը, Աօստի-դուքսը, ծնուած մայիս 30-ին 1845 թուին և ամուսնացած 1867 թուին մայիսի իշխանուհի Մարիա-դէլլա-Զիսատէրնի հետ, ծնուած օգոստոս 9-ին 1847 թուին իսկ վախճանած 1876 թուին. 4) իշխանուհի Մարիա Պիա, ծնուած հոկտեմբեր 16-ին 1847 թուին, և ամուսնացած 1862 թուին, սեպտեմբեր 29-ին Պորտուգալիայի Դոն-Լուիս-Թագաւորի հետ։ Մի քանի տարի առաջ՝ Վիկտոր-Էմմանուէլը ամուսնացաւ մորգանատիկական ասուած պսակով՝ Բոզա-Վէրչէլլինա կնոջ հետ՝ որ ազնուական ծագումից չէր, բայց որին շնորհեցին Կոմանուհի-Միրաֆիորէ պատուանունը։ Այդ կինը իրան բոլորովին հեռու էր պահում պալատից և քաղաքականութիւնից։

Մ. Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Journal des Debats» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը դեկտեմբերի 28-ին հաղորդում է մի չատ հետաքրքիր լուր, որ տարածվել է մայրաքաղաքի քաղաքային շրջաններում։ Այնտեղ խօսում են որ Կրէտէ կղզին թիւրքերը տալիս են «Միացեալ Նահանգներին» 800 միլիոն ֆրանկով։ Այդպիսի գումարի ստանալը, ասում է թղթակիցը, մեծ բաղդաւորութիւն կը լինէր պետական գանձարանի համար, որը վաղուց է չէ տեսել այդքան գումար և բացի դրանից այնպիսի երկիր են տալի թիւրքերը ամերիկացւոց որի բնակիչներից յոյս չունեն թէ իրանց հպատակներ կը մնան։ Իսկ ինչ որ վերաբերում է Ամերիկացիներին, նրանք վաղուց է որ ցանկանում են ձեռք բերել կանդնելու տեղ միջերկրական ծովի վրա, և այժմ ամենից յարմար ժամանակն գտան։ Բայց Անգլիան կը համաձայնվի այդ փոփոխութեանը։

—«Pol. Cerr.» լրագրում գրում են Կ. Պոլսից, որ յունաց պատրիարքի կոնդակի կարգացումն եկեղեցիներում, որի մէջ յայտնում է որ յոյները պատրաստ են իրանց մայրենի քարոզներում և գիւղերում զօրքի պաշտօնը կատարել, այս բաները մեծ անբաւականութիւնների պատճառ եղան։ Բէրայում որտեղ յոյների կրթուած և հարուստ դասն է կենում, այդ կոնդակի կարդացումն կարծես ոչինչ ազդեցութիւն չունեցաւ նրանց վրա, որովհետև ամենը գիտէին որ կառավարութեան լրտեսները գտնվում են եկեղեցիներում։ Ֆանարում պատրիարքական եկեղեցում կանայքը սկսեցին աղաղակել և լալ. մարդիկը չվացնում էին այնպէս որ կոնդակի կարդացումն հազիւ վերջացաւ։ Կոստանդնուպոլսի յոյների եկեղեցում, Մարմարա ծովի վրա, մարդիկը բարձրացան սեղանի վրա, խլեցին քահանայի ձեռքից պատրիարքի կոնդակը և կտոր կտոր արին։ Հայերը նոյնպէս բողոքում էին զինուորական ծառայութեան դէմ բայց նրանց ազգային ժողովի վճիռը որը պէտք է մեծ վեզիրին էին յանձնել, պատրիարքի կանքով մի փոքր թեթևացրած էր, բայց առաջի վճռի սեպագրութիւնը յանձնած է իշխան Ռէյսին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ յունվարի 11-ին։ Երեկ Ս. Պետերբուրգ զարդարված էր դրօշակներով, իսկ երեկոյեան լուսաւորվեցաւ յունվարի 5-ի գեներալ Գուրկոի Դերմինդերի մօտ արած յաղթութեան պատճառով։ Թագաւոր Կայսրը ներկայ էր Պրէօբրաժէնսկի մայր-եկեղեցու ժամասացութեանը։ Հասարակութիւնը հանդիպեց թագաւորին յափշտակված կերպով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ յունվարի 11-ին։ Յունվարի 8-ին ռուսները մտան Ադրիանոպոլ քաղաքը առանց հրացան արձակելու։

ԳՈՒԴԱՈՒՐ յունվարի 10-ին։ Երեկ Կորիի և Գուդաուրի մէջ ճանապարհի վրա բացվեցաւ մի նեղ չափով ձիւնի մէջ։ Ռուսաստանի փոստը ուղարկվեցաւ Թիֆլիս։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅՕԳՈՒՏ ԴԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ

Ծախվում է «ՄՇԱԿԻ» խմբագրատան քսան օրինակ ՓՈՔՐԻԿ ՄԷԳԸ ՈՒ ՆՈՐԱ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ գրքոյկի, գործ տիկին Սարեատօնի թարգմանութիւն օր. Դարիա Գասպարեան Սահակեանցի։

1—3

Շուտով լոյս կը տեսնի ՕՏՏԱԿԱՐ ՇՈՒՊԱՅԻ «Два друга или путешествие Петра въ Японію» գրքոյկի հայերէն թարգմանութիւնը։ ԱՅՍ ԳՐՔԻ ՕԳՈՒՏԸ ԿԸՆԾԱՅՈՒԻ ՏՈՒՆԿԱՍՏԱՆԻՑ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ ԴԱՂԹԱՆՀԱՅ ԴԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ։

2—3

ՅՈՒՆՎԱՐԻ 14. ՏԵՂԵԿԱՑՈՒՅՑ ԹԻՖԼԻՍ. 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Յունվարի 14-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլումպերիալը)	8	45
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1480	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1200	—
Վիգրինի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	228	—
Երկրորդ 5% վիգրինի »	226	—
Մարսելի կուրսը 250—50	100	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա.	9	80
Վենայի կուրսը ածէ 121 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	50
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	265	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօցկու . .	9	15
» միւս տեսակը.	9	15
» չաքարաւազը .	8	60
» տրանզիտը. .	8	80
» մաքսը վճարած	13	50
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	9	50
Միւս տեսակը հին սերմից.	9	—
Բուրդը թուչի . . .	7	50
» թարաքամի .	4	50
Աղիւր Շորագալու . .	2	—
» Երևանի. . . .	—	—
Գարին.	1	40
Մոմը բնաճարպի (стеар.)	14	80
Մետաքս Նուխվայ . .	157	—
Կախեթունը. . . .	100	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	45	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	54	—
Կոֆէն մօկօի. . . .	30	—
» լիվանի . . .	—	—
» մարաքինկոյինը	28	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան . .	2	
Աւստրիա . . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծննդականների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 բուբլ։ Կանանց իւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 բուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 բուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 բոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 բոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվօ.	1. 29	11. 57
Ռիոն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	

	առաւօտ.	
Փօթիից . .	9. 13	
Ռիոն . . .	12. 13	
Միխայլօվօ. .	5. 39	1 37
Գօրի. . . .	7. 5	4. 8
Թիֆլիս. . .	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2, 18
Ռիոն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փօստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բաղուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ. Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիսէի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ

	Կոպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Վէրմիշէվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, ֆուչարեանց վիրաբուժական և ականջի հ. Սօկոլով երեխաների և ներքին հ.։

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Ռէյսի աչքի հ. Ա. Բախուտով, կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան, Բակստ սիֆիլիտական և կաշու հ.

Չորեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Դուբէլիր կրծքային և երեխաների հ. Բակստ կրծքային և ջղային Սօկոլով վիրաբուժական հ.

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Կ. Բախուտով, կանանց և ջղային հ. Բակստ վենեական և կաշու հ.

Ուրբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բախուտով մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Դուբէլիր երեխաների և կրծքային հ. Ռէյս աչքերի հ. Բակստ կրծքային և ջղային հ. Սօկոլով վիրաբուժական հ.

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ՄՕՍԿՎԱ.—Магазинъ Вандракъ. полугодовая плата „Мшакъ“ 6 р., а вы намъ прислали 4 рубл.

—ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍ. Տ. Ա. Տ. Ա. «Մշակի» կէս տարվայ բաժանորդագինը 6 բուբլ է, դուք 5 ր. էք ուղարկել։

—ԵՐԵՒԱՆ. Ա. Զ. Թէ Երևանի օրիորդաց ուսումնարանի վարժուհին անյարմար է իր պաշտօնի համար, այդ մեր ընթերցողներին յայտնի է։ Գրեցէք մի այլ հարցի վերաբերութեամբ։

—ԳԱՆՁԱԿ. Մ. Ե. Ձեր պատասխանը կը տպենք «Մշակի» հետևեալ համարներից մինի մէջ։

—ԵՐԵՒԱՆ. Տ. Ա. Եթէ ուշադրութիւն դարձնէիք «Մշակի» վերջին համարների վրա կը նկատէիք, որ այսուհետև ամեն օր է հրատարակվելու։

Дозволено Цензурою 13 Января 1878 г. Тифлисъ. Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾԲՈՒՆԻ